ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2026/153

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**10 ապրիլի 2026 թ. N 153**

## «ՄԵՂՐՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

**Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին**

Հաստատության լրիվ անվանումը՝ **«Մեղրու պետական քոլեջ» ՊՈԱԿ**

Գործունեության հասցեն՝ **ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, Զ. Անդրանիկի 10**

Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով (այսուհետ՝ Հավատարմագրման կարգ), «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2026 թվականի ապրիլի 10-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «Մեղրու պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՄՊՔ, քոլեջ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

**Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.**

դիմում-հայտի ներկայացում՝ 25 նոյեմբերի 2024 թ.
վերանայված ինքնավերլուծության ներկայացում՝ 29 ապրիլի 2025 թ.
փորձագիտական այցի իրականացում՝ 23-26 սեպտեմբերի 2025թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 26 դեկտեմբերի 2025 թ.
թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում՝ 02 փետրվարի 2026 թ.

ՄՊՔ ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

1. **Արմենուհի Սարգսյան** - ֆիզ.մաթ.գիտությունների թեկնածու, փորձագիտական խմբի ղեկավար:

2. **Սյուզաննա Հովսեփյան** - Էջմիածնի Վ. Համազասպյանի անվան պետական քոլեջի դասախոս, փորձագիտական խմբի անդամ:
3. **Բելլա Աբրահամյան** - Մխրթար Սեբաստացի կրթահամալիրի դասախոս փորձագիտական խմբի անդամ:
4. **Հարություն Չիլինգարյան** - Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսանող, փորձագիտական խմբի անդամ, ուսանող-փորձագետ:

Փորձաքննությունն իրականացվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով: Գնահատման արդյունքներն են.

| Չափանիշ | Եզրակացություն |
|---|---|
| 1. Առաքելություն և նպատակներ | Բավարարում է |
| 2. Կառավարում ու վարչարարություն | Չի բավարարում |
| 3. Մասնագիտության կրթական ծրագրեր | Բավարարում է |
| 4. Ուսանողներ | Բավարարում է |
| 5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ | Բավարարում է |
| 6. Հետազոտություն և զարգացում | Չի բավարարում |
| 7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ | Բավարարում է |
| 8. Հասարակական պատասխանատվություն | Բավարարում է |
| 9. Արտաքին կապեր և միջազգայնացում | Չի բավարարում է |
| 10. Որակի ներքին ապահովման համակարգ | Չի բավարարում |

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ՄՊՔ-ի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտարկումները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների նախնական ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երկու անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

I. Քոլեջի կրթական ծրագրերը և դասախոսական կազմը հիմնականում ապահովում են **որակավորումների արժանահավատ շնորհում**, սակայն այդ գործընթացի գործնական կողմը դեռևս ուժեղացման կարիք ունի: Կրթական ծրագրերի արդյունավետությունը չի գնահատվում շրջանավարտների զբաղվածության և մասնագիտական աշխատանքի անցնելու տվյալների հիման վրա, իսկ աշխատաշուկայի հետ կապը դեռևս համակարգված ձևով չի օգտագործվում ծրագրերի վերանայման ընթացքում: Մի շարք կրթական ծրագրերում ուսանողներին տրամադրվող նյութը հիմնականում տեսական բնույթ ունի և բավարար չափով չի կապվում Մեղրիի տարածաշրջանի իրական աշխատանքային միջավայրերի հետ՝ սպասարկման, փոխադրումների, հաշվապահական հաշվառման, նախադպրոցական կրթության և բաց լեռնային աշխատանքների ուղղություններով: Ուսանողների ինքնուրույն վերլուծական և կիրառական կարողությունների զարգացումը սահմանափակվում է, քանի որ կրթական գործընթացում դեռևս քիչ են իրական իրավիճակների վրա հիմնված առաջադրանքները, փոքր նախագծերը, գործնական խնդիրների վերլուծությունները և մասնագիտական լուծումներ առաջարկելու աշխատանքները: Դասախոսների հետազոտական և ստեղծագործական գործունեության սահմանափակ լինելը նույնպես նվազեցնում է կրթական ծրագրերի

թարմացման հնարավորությունը: Գործատուների ներգրավումը առկա է հիմնականում պրակտիկայի կամ առանձին դասերի մակարդակով, սակայն նրանց մասնագիտական փորձը դեռևս համակարգված չի օգտագործվում ուսումնական առաջադրանքների մշակման, իրական աշխատանքային իրավիճակների հիման վրա գործնական պարապմունքների կազմակերպման և ուսանողների գործնական կարողությունների գնահատման համար:

II. Քոլեջում առկա են կառավարման կառուցվածքային հիմքեր. առկա են կառավարման մարմիններ, ներքին կարգավորող փաստաթղթեր և պլանավորման որոշ գործընթացներ: Սակայն դրանք դեռևս չեն գործում որպես արդյունքահեն և տվյալահեն մեխանիզմ: Որոշումների կայացումը հիմնականում կենտրոնացված է ղեկավարության մակարդակում, իսկ Կառավարման խորհրդի, ստորաբաժանումների, դասախոսների, ուսանողների և գործատուների մասնակցությունը սահմանափակ է: Ռազմավարական և տարեկան պլանների միջև հստակ կապ չի ապահովվում, հաշվետվությունները հիմնականում նկարագրական են, իսկ կատարողականի չափելի ցուցանիշներ սահմանված չեն: Արդյունքում քոլեջը չի կարողանում համակարգված գնահատել կրթական ծրագրերի, դասախոսների զարգացման, ուսանողների աջակցության, գործատուների հետ համագործակցության և ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը: Որակի ապահովման համակարգը ինտեգրված չէ կառավարման գործընթացներում, իսկ հավաքագրվող տվյալները չեն օգտագործվում պլանավորման, որոշումների կայացման և բարելավումների համար: Քոլեջին անհրաժեշտ է ուժեղացնել Կառավարման խորհրդի բովանդակային դերակատարությունը՝ խորհրդի նիստերում քննարկելով ռազմավարական նպատակների կատարումը, թերությունների վերացման ծրագրի ընթացքը, կրթական ծրագրերի արդյունքները, շահակիցների կարծիքները և ռիսկերը: Խորհրդի արձանագրություններում պետք է արտացոլվեն քննարկված խնդիրները, որոշումների հիմնավորումները, պատասխանատուները, ժամկետները և վերահսկման քայլերը:

III. Քոլեջին նպատակահարմար է կենտրոնանալ արդյունքահեն կառավարման և որակավորումների արժանահավատ շնորհման ինստիտուցիոնալ ամրապնդման վրա՝ հաշվի առնելով Մեղրիի տարածաշրջանային առանձնահատկությունները և քոլեջի՝ որպես համայնքի միակ միջին մասնագիտական ուսումնական հաստատության դերը.

- կառավարման խորհրդի օրակարգերում պարբերաբար ներառել ոչ միայն ընթացիկ վարչարարական հարցեր, այլև կրթական ծրագրերի արդյունավետության, ուսանողների թվի աճի պատճառների, շրջանավարտների զբաղվածության, գործատուների հետ համագործակցության, դասախոսների զարգացման, ռեսուրսների օգտագործման և որակի ապահովման արդյունքների քննարկումներ,
- ակտիվացնել համագործակցությունը Մեղրի համայնքապետարանի, Սյունիքի մարզպետարանի, ոլորտային պետական մարմինների, միջազգային և դոնոր կազմակերպությունների հետ՝ կրթական ծրագրերի արդիականացման, ուսանողների կիրառական նախագծերի իրականացման, դասախոսների վերապատրաստման և լրացուցիչ ռեսուրսների ներգրավման նպատակով,
- ձևավորել շրջանավարտների տվյալների բազա և տարեկան առնվազն մեկ անգամ իրականացնել զբաղվածության ու մասնագիտական համապատասխանության վերլուծություն՝ արդյունքները կիրառելով կրթական ծրագրերի վերանայման և ընդունելության պլանավորման ընթացքում,
- յուրաքանչյուր կրթական ծրագրում ներառել Մեղրիի տարածաշրջանի տնտեսական և համայնքային խնդիրներին առնչվող կիրառական առաջադրանքներ,

- դասախոսների մասնագիտական զարգացումը կապել կրթական ծրագրերի կարիքների և տարածաշրջանի զարգացման ուղղությունների հետ՝ անհրաժեշտության դեպքում կիրառելով հիբրիդային կամ առցանց ձևաչափեր՝ համապատասխան մասնագետների, գործատուների և ոլորտային փորձագետների ներգրավման համար,
- ուսումնասիրել Մեղրիի տարածաշրջանում գյուղատնտեսության, զբոսաշրջության, լոգիստիկայի և ձեռնարկատիրության ոլորտներում նոր մասնագետների պահանջարկը և դիտարկել այդ ուղղություններով նոր կրթական ծրագրերի, մոդուլների կամ կարճաժամկետ դասընթացների ներդրման հնարավորությունը՝ դրանք կապելով գործատուների կարիքների և շրջանավարտների զբաղվածության հեռանկարների հետ,
- որակի ներքին ապահովման գործընթացները փաստաթղթային մակարդակից տեղափոխել գործարկման հարթություն՝ ապահովելով կրթական ծրագրերի, ուսանողների, շրջանավարտների, գործատուների, դասախոսների և ռեսուրսների վերաբերյալ տվյալների պարբերական հավաքագրում, վերլուծություն և դրանց հիման վրա կառավարչական որոշումների կայացում:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Մեղրու պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել 4 /չորս/ տարի պայմանով ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 2 տարի հետո իրականացնել փորձաքննություն:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել ՄՊՔ-ի Կառավարման խորհրդի կողմից հաստատված փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով I, II և III կետերում նշված խնդիրների առաջնահերթ լուծմանն ուղղված գործողությունները՝ ապահովելով հնարավոր ռիսկերի կանխարգելման և կառավարման համապատասխան մեխանիզմներ:
3. Հատուկ ուշադրություն դարձնել կրթական ծրագրերում որակավորումների արժանահավատ շնորհման արդյունավետ ապահովմանը՝ կազմակերպելով բոլոր կրթական ծրագրերի ներքին աուդիտ մինչև հաջորդ հավատարմագրման ժամկետը:
4. Հավատարմագրման կարգի 12.1 կետի պահանջներին համապատասխան 2 տարին մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով հաստատության գործունեության բարելավումը, նորարարությունները ու ձեռքբերումները: Գնահատման արդյունքները քննարկել քոլեջի կառավարման խորհրդում:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին մեկ տարի հետո պարտադիր մշտադիտարկման ենթարկել ՄՊՔ-ի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի նախագահ Վ. Գաբրիելյան

2026 թ., հունվարի 09